

Ս. Շ. Զուրաբյան

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԳՆԱԺԱՄԻ ՆՈՐ ԷՏԱՊԸ

Կապիտալիզմը, որպես հասարակական ֆորմացիա, ունի զարգացման իր փուլերը: Նրա զարգացման ամենաբարձր և վերջին աստիճանը իմպերիալիզմն է: Սակայն կապիտալիզմի այդ նոր փուլը՝ իմպերիալիզմը նույնպես ունի իր զարգացման և անկման տարբեր աստիճանները: Իմպերիալիզմի զարգացման որոշ աստիճանում անխուսափելիորեն առաջ եկավ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը՝ որպես կապիտալիզմի իմպերիալիստական ստադիայի հակասությունների արդյունք և հետևանք: Ընդհանուր ճգնաժամի առաջացումից հետո կապիտալիզմի նեխման պրոցեսը ընթանում է արդեն նոր պայմաններում, որը արմատապես տարբերվում է նրա նախկին փուլերից:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը չի կարելի շփոթել պարբերաբար կրկնվող տնտեսական ճգնաժամերի հետ, թեպետև դրանց միջև գոյություն ունեն փոխազդեցություն և կապ: Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը խորացնում և արագացնում է պարբերական տնտեսական ճգնաժամերը, իսկ նրանք իրենց հերթին ազդում են ընդհանուր ճգնաժամի խորացման վրա:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը նշանակում է համաշխարհային կապիտալիստական ողջ սիստեմի նգնաժամ իր բոլոր կողմերով՝ տնտեսական, բաղադրական, իդեոլոգիական, կուլտուրայի, արվեստի, գիտության բնագավառներում: Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը նշանակում է նրա սիստեմի խաբխրումը, թուլացումը, ուժերի ջլատումը, նրա բոլոր հակասությունների ծայրաստիճան խորացումը և սրումը:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը առաջացավ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, սակայն նրա ամենահիմնական և ամենաբնորոշ գիծը և առաջացման գլխավոր պատճառը 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի հաղթանակն էր Ռուսաստանում: Այդ հաղթանակի հետևանքով կապիտալիզմը դադարեց միահեծան համաշխարհային սիստեմ լինելուց: Համաշխարհային կապիտալիստական սիստեմի կողքին առաջ եկավ նոր ու նրան հակադիր սոցիալիստական սիստեմը, որը իր գոյությամբ և զարգացմամբ ավելի է խորացնում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը:

Հայտնի է այն բնութագիրը, որ Վ. Ի. Լենինը տվել է իմպերիալիզմին: Սակայն կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը առաջանալով իմպերիալիզմի բազայի վրա և նրա պայմաններում, առաջ է բերում մի շարք նոր երևույթներ, որոնք բնութագրում են կապիտալիզմի ողջ սիստեմի ճգնաժամային վիճակը: Իրանք, այդ նոր երևույթները կապիտալիզմի տնտեսական, քաղաքական, կուլտուրայի և իդեոլոգիայի ասպարեզում իրենցից ներկայացնում են՝ Վ. Ի. Լենինի կողմից նշված իմպերիալիզմի հատկանշական գծերի զարգացումն ու կոնկ-

յետ արտահայտությունը և ցույց են տալիս կապիտալիստական սիստեմի նեխվածության ու պորտաբուծության հետագա խորացումը ու զարգացումը:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բնորոշ գծերը կարելի է համարել.

1. Կապիտալիզմը դադարել է միահեծան համաշխարհային սիստեմ լինելուց, երբ արդեն ճեղքվել է իմպերիալիզմի շղթան և առաջ է եկել սոցիալիստական սիստեմը՝ հանձին ՍՍՌՄ-ի, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ հանձին սոցիալիզմի հզոր համաշխարհային սիստեմի.

2. որպես կապիտալիստական տնտեսության անկայունության զարգացման հետևանք, գոյություն ունի արտադրողական կարողությունների խրոնիկական թերբեռնվածություն, երբ կապիտալիստական սիստեմը ավելի և ավելի է անընդունակ դառնում՝ ռացիոնալ կերպով օգտագործելու իր կողմից ստեղծված արտադրողական ուժերը, գիտության և տեխնիկայի նվաճումները.

3. առաջ է գալիս խրոնիկական մասսայական գործազրկություն՝ որպես հետևանք վերը նշված արտադրողական կարողությունների թերբեռնվածության.

4. զգալիորեն նվազում են կապիտալիստական տնտեսության զարգացման տեմպերը՝ որպես հետևանք կապիտալիզմի տնտեսական և սոցիալական հակասությունների սրման, նրա ցիկլային վարգացման մեջ տեղի ունեցող լուրջ փոփոխությունների.

5. կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում լուրջ փոփոխություններ են տեղի ունենում կապիտալիստական տնտեսության ցիկլային զարգացման մեջ, երբ կրճատվում է ճգնաժամների միջև ընկած տևողությունը, իսկ իրենք՝ ճգնաժամերը ավելի երկարատև ու ավերիչ են դառնում.

6. մեծ շափով ուժեղանում է բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների հարաբերական և հաճախ նաև բացարձակ աղքատացումը: Սրվում է աշխատավորների պայքարը մոնոպոլիանների գերիշխանության դեմ: Մեծ ծավալ է ստանում բանվոր դասակարգի գործադուլային պայքարը, որը ավելի և ավելի է քաղաքական բնույթ ստանում.

7. կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը բնութագրվում է նաև մոնոպոլիստական կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի վերածման տենդենցների ուժեղացումով, բուրժուական պետության տնտեսական դերի ուժեղացումով: Սա նույնպես արտահայտությունն ու հետևանքն է այն բանի, որ բուրժուազիան այլևս ի վիճակի չէ տնտեսական գործունեության ազատության սկզբունքներով ապահովելու իր տիրապետությունը և դիմում է պետության ուժին, որպեսզի նրա միջոցով «կարգավորի» զարգացող տնտեսական և սոցիալական հակասությունները.

8. կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում սրվում են միջազգային, միջպետական հարաբերությունները, որոնց հիմքում մի կողմից ընկած է կապիտալիզմի անհամաչափ զարգացման օրենքը, իսկ մյուս կողմից՝ երկու սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի մրցությունը և պայքարը:

9. Գաղութային և կիսագաղութային ժողովուրդների ազգային ազատագրական պայքարի բուռն ծավալումը, երբ առաջին համաշխարհային պատերազմից և Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո սկսվեց իմպերիալիզմի գաղութային սիստեմի ճգնաժամը, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի առաջացումից հետո, իմպերիա-

լիզմի գաղութային սիստեմի ճգնաժամը վերածվեց նրա քայքայմանը և փլրվածասր:

10. Բդեռլոգիայի և կուլտուրայի ասպարեզում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը արտահայտվում է նրանում, որ, ինչպես դիպուկ կերպով իր ժամանակ ասել է Ա. Ա. Փոլանովը, «Նորից լույս աշխարհ են հանվել և բուրժուական փիլիսոփայության սպառազինության մեջ են ընդունվել ատոմա-դոլլարային դեմոկրատիայի սպասավորները, խավարամոլության ու տերտերականության մաշված գրահները՝ վատիկանը և ռասայական թեորիան, լկտիացած նացիոնալիզմը և հնամաշ իդեալիստական փիլիսոփայությունը, ծախու դեզին մամուլը և ապականված բուրժուական արվեստը»¹:

Սրան կարելի է ավելացնել նաև այն, որ բուրժուազիայի ժամանակակից գաղափարախոսները՝ ջանալով ամեն կերպ կոծկելու կապիտալիզմի աճող հակասությունները, առաջ են քաշում «ժողովրդական», «դեմոկրատական» և կապիտալիզմի այլ հակադրական, ռեակցիոն տնտեսագիտական գոեհիկ ուսմունքների տարատեսակները:

Սրանք են համառոտակի կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բնորոշ գծերը:

Վերջերս հրապարակած մեր պարտիայի նոր ծրագրի նախագծում տրված է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորը, մարքս-լենինյան բնութագիրը: Ծրագրի նախագծի «Համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամը» բաժնում ընդգծված է, որ «Կազմալուծման անկասելի պրոցեսն է համակել կապիտալիզմին հիմքից մինչև գագաթը՝ նրա տնտեսական ու պետական կարգին, քաղաքականությանն ու գաղափարախոսությանը»²:

Պետք է նկատի ունենալ, որ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի նշված գծերը հիմնականում հատկանշական են նրա բոլոր էտապների համար, սակայն տարբեր էտապներում նրանք հանդես են գալիս տարբեր խորությամբ և տարբերվում են ոչ միայն քանակական, այլև որակական հատկանիշներով:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամն ունեցել է զարգացման իր երեք էտապը. 1) առաջին համաշխարհային պատերազմից և Հոկտեմբերյան ռևոլյուցիայից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը ընկած ժամանակաշրջանը, 2) երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանից մինչև 1950-ական թվականների կեսերը, 3) 1950-ական թվականների կեսերից հետո:

Մեր նպատակը չի այստեղ բնութագրել կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բոլոր էտապները: Այս հոդվածում մեր նպատակն է ցույց տալ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ էտապի բնորոշ կողմերը:

*
* * *

1960 թ. նոյեմբերին տեղի ունեցավ կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցությունը, որին մասնակցում էին մարքս-լենինյան 81 պաշտիանների ներկայացուցիչներ: Այդ խորհրդակցությունն ձևի չափազանց կարևոր նշանակություն սոցիալիստական սիստեմի:

¹ Ելույթ Գ. Ֆ. Ալեքսանդրովի, «Արևմտա-եվրոպական փիլիսոփայությունը» գրքի վերաբերյալ կայացած դիսկուսիայում, էջ 40:

² «Սովետական Հայաստան», 30 հուլիսի, 1961 թ.:

համաշխարհային բանվորական և կոմունիստական շարժման զարգացման համար: Խորհրդակցությունն ընդունեց երկու կարևորագույն փաստաթուղթ. 1) կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության «Հայտարարությունը», 2) Դիմում ամբողջ աշխարհի ժողովուրդներին:

Այդ փաստաթղթերում ստեղծագործական մարքսիզմի հիման վրա վերլուծված են արդի միջազգային իրադրության կարևորագույն պրոբլեմները, համաշխարհային սոցիալիստական սիստեմի պատմական նվաճումները, երկու սիստեմների ուժերի փոխհարաբերության փոփոխումը հօգուտ սոցիալիզմի, կապիտալիստական աշխարհի անկայունության խորացումը և բանվորական շարժման հիմնական խնդիրները ժամանակակից պայմաններում:

Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության «Հայտարարության» մեջ կարևորագույն մի շարք հարցերի հետ առաջ է քաշված նաև տեսական և գործնական մեծ նշանակություն ունեցող մի հարց. դա կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հետագա խորացման և սրման հարցն է: Վերլուծելով ժամանակակից կապիտալիզմի հակասությունները, ամբողջ միջազգային իրադրությունը, խորհրդակցությունը նշեց, որ դրանք «...վկայություններ են այն բանի, որ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի զարգացման մեջ նոր էտապ է սկսվել»¹:

Սա նոր եզրակացություն ու նոր հարցադրում է:

Որոնք են այն նոր որակական երևույթները համաշխարհային ասպարեզում, որոնք հիմք են տալիս խոսելու կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի նոր, երրորդ էտապի առաջացման մասին:

Դրանք հետևյալ հիմնական իրադրություններն են.

1) համաշխարհային սոցիալիստական սիստեմի ուժեղացումը և զարգացումը. այն, որ նա թևակոխել է իր զարգացման նոր փուլը և վերածվել է մարդկային հասարակության զարգացման վճռական գործոնի, որ համաշխարհային թատերաբեմում փոխվել է ուժերի փոխհարաբերությունը սոցիալիզմի և կապիտալիզմի միջև՝ հօգուտ սոցիալիզմի.

2) իմպերիալիզմի գաղութային սիստեմի արագ տեմպերով տեղի ունեցող քայքայումը և փլուզումը, որը, իր հերթին, մեծ չափով թուլացնում է իմպերիալիզմի հիմքերը.

3) կապիտալիստական աշխարհի տնտեսական անկայունության խորացումը, նրա տնտեսական և սոցիալական հակասությունների խորացումը և սրումը:

Սրանք են այն արմատական պատճառները, որոնք առաջացրին կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ էտապը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ երրորդ էտապը ունի իր առանձնահատկությունները և իր բնույթով ու առաջացման պայմաններով զգալիորեն տարբերվում է նախորդ էտապներից:

Նախ՝ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի առաջին և երկրորդ էտապները տեղի ունեցան համաշխարհային (առաջին և երկրորդ) պատերազմների ժամանակաշրջանում. երկրորդ՝ առաջին էտապները բնորոշ են նրանով, որ առաջինի ժամանակ ստեղծվեց առաջին սոցիալիստական պետությունը, ՍՍՌՄ, իսկ երկրորդ էտապում առաջ եկան Եվրոպայի և Ասիայի մի շարք ժողովրդա-

¹ Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության Հայտարարությունը, Հայպետհրատ, 1960 թ., էջ 16:

դեմոկրատական երկրներ, որոնք ՍՍՌՄ-ի հետ միասին ստեղծեցին սոցիալիզմի համաշխարհային սիստեմը: Մինչդեռ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ էտապը առաջ եկավ 1950-ական թվականների կեսերից՝ այլ պայմաններում, երբ. 1) համաշխարհային պատերազմ չկար, 2) երբ դեռ առաջ չեկան նոր սոցիալիստական երկրներ: Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության «Հայտարարության» մեջ ասված է. «Այդ (երրորդ—Ս. Զ.) էտապի յուրահատկությունն այն է, որ նա առաջացել է ոչ թե համաշխարհային պատերազմի կապակցությամբ, այլ երկու սիստեմաների մրցության ու պայքարի, սոցիալիզմի օգտին ուժերի հարաբերակցության ավելի ու ավելի փոփոխման, իմպերիալիզմի բոլոր հակասությունների խիստ սրման պայմաններում»¹:

Հետևաբար այստեղից պետք է եզրակացնել, որ սխալ է այն տեսակետը, երբ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացումը, նրա նոր էտապի առաջացումը անպայման կապում էին պատերազմների ու սոցիալիզմի նոր երկրների առաջացման հետ:

Ինչպես ասված է, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ էտապի առաջացումը պայմանավորված է վերը նշված երեք հիմնական պատճառներով, որոնցից առաջինը դա սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հզորության աճն է, երբ նա թևակոխելով իր զարգացման նոր փուլը, դարձել է մարդկային հասարակության զարգացման վճռական գործոնը: Մեր դարաշրջանի հիմնական բովանդակությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելն է և, ինչպես ասված է կոմունիստական և բանվորական պարտիաների «Հայտարարությունում», «Արդի դարաշրջանում մարդկային հասարակության պատմական զարգացման գլխավոր բովանդակությունը, գլխավոր ուղղությունը և գլխավոր առանձնահատկությունները որոշվում են համաշխարհային սոցիալիստական սիստեմով, իմպերիալիզմի դեմ, հասարակության սոցիալիստական վերակառուցման համար պայքարող ուժերով»²:

Ներկայումս սոցիալիստական երկրների բնակչությունը մեկ միլիարդից ավելի է և կազմում է ամբողջ մարդկության թվի 1/3-ից ավելին: Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրները արտադրում են արդյունաբերական և դյուղատնտեսական համաշխարհային արտադրանքի մոտ 36 տոկոսը, ընդ որում սոցիալիստական երկրների տնտեսարար կշիռը համաշխարհային արտադրանքում տարեցտարի ավելանում է: Այսպես, օրինակ, սոցիալիստական երկրների տնտեսարար կշիռը համաշխարհային արտադրության մեջ 1957—1959 թթ. ընթացքում աճել է հետևյալ կերպ (տո-ներով)³.

	1957 թ.	1959 թ.
Քարածուխ	39,5	49,8
Պողպատ	25,2	30,9
Զուգուն	26,0	35,5
էլեկտրաէներգիա	17,7	19,9
Բամբակի դործվածքեղեն	28,4	35,0 և այլն:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 9:

³ Տե՛ս ժուռնալ «Коммунист», № 6, 1961, стр. 92.



Հեռու չէ այն ժամանակը, երբ համաշխարհային սոցիալիստական սիստեմի երկրները կհասնեն և կանցնեն կապիտալիստական աշխարհի գլխավոր երկրներից ոչ միայն արտագրության բացարձակ ծավալով, այլև մեկ շնչին ընկնող արտադրանքի տեսակետից:

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը արդեն վաղուց է ցույց տվել իր մեծագույն առավելությունները կապիտալիստական սիստեմի նկատմամբ: Դեռ 1918 թ. վ. Ի. Լենինը ասում էր. «...Անդառնալիորեն են անցել այն ժամանակները, երբ սոցիալիստական ծրագրերի մասին վիճում էին ըստ զրքույկների: Ներկայումս սոցիալիզմի մասին կարելի է խոսել միայն ըստ փորձի»¹: Եվ հիրավի սոցիալիզմի փորձը բացահայտ կերպով ցույց է տալիս նրա առավելությունները՝ առաջին հերթին տնտեսական զարգացման տեմպերի ասպարեզում: Եթե վերցնենք միայն վերջին մի քանի տարիները (1956—1960 թթ.), ապա կտեսնենք, որ սոցիալիստական երկրների արդյունաբերության միջին տարեկան աճը կազմել է 14,5 տոկոս, այն ժամանակ, երբ կապիտալիստական աշխարհում նա կազմել է միայն 4 տոկոս, այսինքն սոցիալիստական երկրների արդյունաբերության արտադրանքի միջին տարեկան աճը մոտ 3,4 անգամ գերազանցել է կապիտալիստական աշխարհի տեմպերին:

Բուրժուազիայի ռեակցիոն իդեոլոգները, տնտեսագետները, քաղաքական ու հասարակական գործիչները հույս են հայտնում, որ Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների տնտեսական զարգացման տեմպերը հետըհետե կնվազեն, իսկ կապիտալիստական երկրների, հատկապես ԱՄՆ-ի արդյունաբերության զարգացման տեմպերը կարելի է բարձրացնել մինչև տարեկան 4 տոկոս (Լիպման), մինչև 5 (պրեզիդենտ Քենեդի) և նույնիսկ մինչև 6 տոկոս (Ռոկֆելլեր): Սակայն դրանք երազանքներ են: Փաստերը ցույց են տալիս, որ Սովետական Միության արդյունաբերության զարգացման տեմպերը զգալիորեն գերազանցում են յոթնամյակի նախագծումներից և տարեկան միջին թվով կազմում են 10—11 տոկոս, մինչդեռ ըստ գիտականորեն արված պրոգնոզների, ԱՄՆ-ի արդյունաբերությունը կարող է տալ տարեկան միջին թվով միայն 2—2,5 տոկոս աճ:

Սոցիալիզմի առավելությունները կապիտալիզմի նկատմամբ արտահայտվում են նաև գիտության, տեխնիկայի, արվեստի ու կուլտուրայի զարգացման ասպարեզում: Այդ մասին են ասում, օրինակ, երկրի սովետական արբանյակները, այն հուշակավոր փաստը, որ սովետական մարդը, մայրը Գագարինը առաջինը նվաճեց տիեզերքը:

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը այժմ դարձել է տնտեսական, քաղաքական և ռազմական մի այնպիսի ուժ, որին չեն կարող հաղթահարել կապիտալիստական երկրները, որ «սոցիալիստական պետությունների համախմբումը մի միասնական լազերում, այդ լազերի ամրապնդվող միասնությունը և անընդհատ անող հզորությունը ապահովում են ամբողջ սիստեմի շրջանակներում սոցիալիզմի լիակատար հաղթանակը»²: Սոցիալիստական երկրների ներքին զարգացման տեսակետից ևս բացառված է կապիտալիզմի վերականգնման հնարավորությունը: Այս բոլորի հիման վրա կարելի է ասել

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 645:

² Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության Հայտարարությունը, էջ 21:

սոցիալիզմի վերջնական հաղթանակի մասին ոչ միայն ՍՍՌՄ-ում, այլև ողջ համաշխարհային սոցիալիստական սիստեմում:

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի գոյությունը, նրա զարգացումը և ամրապնդումը ավելի և ավելի է խարխուլում կապիտալիստական սիստեմի հիմքերը, խորացնում նրա ընդհանուր ճգնաժամը հետևյալ պատճառներով:

1) կապիտալիստական աշխարհը զրկվեց ՍՍՌՄ, Չինաստանի և մյուս սոցիալիստական երկրների շուկայից և այդ երկրները կապիտալ արտահանելու հնարավորությունից: Սա մի մեծագույն հարված էր կապիտալիզմի տրեստեսական սիստեմին:

2) սոցիալիստական սիստեմի գոյությունը հսկայական ազդեցություն է դործում կապիտալիստական աշխարհի բանվոր դասակարգի, գյուղացիության ուղղուցիտն պայքարի, ինչպես նաև գաղութային ժողովուրդների ազգային ազատագրական պայքարի ծավալման և ուժեղացման վրա և դրանով իսկ թուլացնում կապիտալիզմի գոյության հիմքերը:

3) Սովետական Միության, ինչպես նաև մյուս սոցիալիստական երկրների տնտեսական զարգացման փորձը գաղութային ճնշումից նոր ազատագրված և տնտեսապես թույլ զարգացած երկրներին ցույց է տալիս, թե ինչ ուղիով է հնարավոր պատմական կարճ ժամանակում և արագ տեմպերով զարգացնել երկրի տնտեսությունը և բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը: Այս ասպարեզում մեծ դեր է կատարում այն փաստը, որ ՍՍՌՄ և մյուս սոցիալիստական երկրները անշահախնդիր և ավելի ձեռնտու պայմաններով օգնություն են ցույց տալիս թույլ զարգացած երկրներին (Հնդկաստանին, Արաբական Միացյալ Ռեսպուբլիկային, Իրաքին, Աֆրիկյան ժողովուրդներին և այլն) և դրանով իսկ արգելակում իմպերիալիստական պետություններին՝ ուժեղացնելու իրենց տնտեսական ու քաղաքական ազդեցությունը այդ երկրներում, շարունակելու նրանց գաղութային շահագործումը:

4) Այն փաստը, որ Սովետական Միությունը զլխավորում է բոլոր խաղաղասեր ժողովուրդների պայքարը պատերազմի վտանգի դեմ, ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման և ընդհանուր զինաթափման համար, մի խոշորագույն քաղաքական գործոն է, որը թուլացնում է իմպերիալիզմի, պատերազմի հրձիգների գիրքերը:

Այսպիսով, համաշխարհային սոցիալիստական սիստեմի ուժեղացումը և ամրապնդումը, այն, որ նա դարձել է մի մեծ ինտերնացիոնալ ուժ, թեև կոխել իր զարգացման նոր փուլը, վերածվել մարդկային հասարակության զարգացման վճռական գործոնի, հանդիսացավ այն հիմնական պատճառը, որի շնորհիվ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը ավելի խորանալով՝ թեև կոխեց իր նոր, երրորդ էտապը:

Մյուս հիմնական պատճառը, որը բերեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ էտապի առաջացմանը, դա իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումն է: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ իմպերիալիզմի գաղութային սիստեմի ճգնաժամը, ապա նրա կազմալուծումը, փլուզումը առաջին հերթին հետևանք է Հոկտեմբերյան սոցիալիստական ուղղուցիտայի հաղթանակի, Սովետական Միության գոյության, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի առաջացման: Այդ բանը լավ են հասկանում իրենք՝ գաղութային երկրների ժողովուրդները:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գաղութային երկրներին

ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը իր աննախընթաց ծավալումն ստացավ գլխավորապես սոցիալիզմի համաշխարհային սիստեմի առաջացման և ամրապնդման հետևանքով:

Ներկայումս արդեն գաղութային ճնշումից ազատվել են 1,5 միլիարդ մարդ, որը կազմում է ամբողջ մարդկության մոտ կեսը: Սակայն դեռ գաղութային վիճակումն են գտնվում մոտ 100 միլիոն մարդ, որը կազմում է երկրագնդի բնակչության մոտ 3 տոկոսը: Այսպիսով, դեռ ամբողջովին չի վերացված գաղութային խայտառակ սիստեմը: Ինչպես հայտնի է, անցյալ տարի ՄԱԿ-ի 15-րդ սեսիայում Ն. Ս. Խրուշչովը ամբողջ սրությամբ բարձրացրեց այդ հարցը, և ՄԱԿ-ը որոշում ընդունեց գաղութային սիստեմի վերացման անհրաժեշտության մասին: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ գաղութարար պետությունները ստիպված, ձևականորեն քվեարկելով գաղութային սիստեմի վերացման օգտին, փաստորեն բոլոր միջոցներով փորձում են այահպանել իրենց առավելությունները գաղութների վրա: Այդ մասին են ասում Կոնգոյի դեպքերը Աֆրիկայում և ԱՄՆ-ի իմպերիալիստների ոտնձգությունները Կուբայի ազատասեր ժողովրդի նկատմամբ և այդ կարգի բազմաթիվ փաստեր:

Իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը խոշորագույն քաղաքական և տնտեսական հարված է համաշխարհային կապիտալիստական սյուսեմին և հանգեցնում է նրա ընդհանուր ճգնաժամի խորացմանը և նրա նոր էտապի առաջանալուն:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացումը, նրա նոր էտապի առաջացումը արտահայտվում է նաև նրանում, որ կապիտալիստական երկրների էկոնոմիկայի անկայունությունը ավելի է սրվում և մեծ չափերի հասնում: Դա պարզորոշ է դառնում, երբ մենք դիտում ենք կապիտալիստական էկոնոմիկայի ներկայիս վիճակի տարբեր կողմերը, առաջին հերթին նրա զարգացման տեմպերի ասպարեզում:

Կապիտալիստական տնտեսական սիստեմի անկման տենդենցները իրենց արտահայտությունն են գտնում զարգացման տեմպերի նվազման մեջ: Այսպես, օրինակ, 1957—1960 թթ., համեմատած 1953—1956 թթ. հետ, արդյունաբերական արտադրանքի տարեկան աճի միջին տեմպերը ցածր էին ԱՄՆ-ում— 2 անգամ, Անգլիայում և ԳՖՌ—1,6 անգամ: Իսկ տնտեսական զարգացման տեմպերի այդպիսի նվազումը ցույց է տալիս, որ կապիտալիստական տնտեսական սիստեմը այլևս ընդունակ չէ ապահովելու տնտեսության, տեխնիկայի, արտադրողական ուժերի բարձր տեմպերով զարգացումը:

Կապիտալիստական աշխարհի էկոնոմիկայի անկայունության խորացումը արտահայտվում է նաև տնտեսության ցիկլային զարգացման մեջ տեղի ունեցող փոփոխություններում: Մարքսը իր ժամանակ նշել է, որ կապիտալիստական տնտեսության մեջ պարբերաբար կրկնվող ճգնաժամերը առաջ են գալիս 11—12 տարվա ընդմիջումներից հետո. հետագայում, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի առաջին և երկրորդ էտապներում ճգնաժամերի միջև ընկած ժամանակաշրջանը միջին թվով հավասար էր լինում 6—8 տարվա, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճգնաժամերի միջև ընկած ժամանակաշրջանը ավելի է կրճատվել, այսինքն պարբերաբար կրկնվող տնտեսական ճգնաժամերը ավելի հաճախակի են տեղի ունենում: Այսպես, հետպատերազմյան առաջին (1948—1949 թթ.) և երկրորդ (1953—1954 թթ.) ճգնաժամերի միջև ընկած ժամանակաշրջանը տևեց 4 տարի, երկրորդ (1953—1954 թթ.)

և երրորդ (1957—1958 թթ.) ճգնաժամերի միջև ընկած ժամանակաշրջանը տե-
վեց 3 տարի, իսկ 1960 թ. ԱՄՆ-ում սկսված տնտեսական ճգնաժամը սկսվեց
նախորդ ճգնաժամից միայն 2 տարի հետո... Եթե սրան ավելացնենք նաև խրո-
նիկական ագրարային ճգնաժամի անկայությունը մի շարք կապիտալիստա-
կան երկրներում, հատկապես ԱՄՆ-ում, ապա հասկանալի է, որ կապիտալիս-
տական տնտեսության ցիկլային պարզացման մեջ տեղի ունեցող փոփոխու-
թյունները նրա հակասությունների, անկայունության խորացման և սրման
արգասիքն ու հետևանքն են:

Կապիտալիստական հասարակական և տնտեսական սիստեմը ոչ միայն
ընդունակ չէ հասարակության զարգացման, պրոգրեսի օգտին ծառայեցնելու
ժամանակակից գիտատեխնիկական հայտնագործումները, այլև լրիվ բեռն-
վածությամբ օգտագործելու այն արտադրական կարողությունները, որ նա
ստեղծել է: ԱՄՆ-ում 1960 թ. արդյունաբերության արտադրական ապարատի
20 տոկոսը չէր օգտագործվում, իսկ առանձին ճյուղերում այդ տոկոսը ավելի
բարձր էր: ԱՄՆ-ում արդյունաբերության այնպիսի կարևորագույն ճյուղ, ինչ-
պիսին է մետաղաձուլումը, 1960 թվականի վերջին ամիսներին գործում էր իր
կարողության միայն 53—55 տոկոսով: Կանադայում 1960 թ. վերջերին ար-
դյունաբերության կարողությունները օգտագործվում էին միայն մոտ 70 տո-
կոսով: Նման դրություն գոյություն ունի Անգլիայում, Ճապոնիայում և այլ
կապիտալիստական երկրներում:

Արտադրական կարողությունների խրոնիկական թերբեռնվածությունը
անխուսափելիորեն հանգեցնում է խրոնիկական-մասսայական գործազրկու-
թյան, մանավանդ ճգնաժամերի պայմաններում: Ներկայումս գործազուրկների
թիվը ԱՄՆ-ում կազմում է մոտ 6—7 միլիոն, Իտալիայում մոտ 1,5 միլիոն,
Անգլիայում 500 հազար մարդ և այլն:

Կապիտալիստական երկրների տնտեսական անկայունության խորացու-
մը, գործազրկության աճը, շուկայի պրոբլեմի սրումը, մոնոպոլիստների միջև
մրցակցության ուժեղացումը ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային
թատերաբեմում, էկոնոմիկայի ռազմականացումը, հանգեցնում են ինֆլյա-
ցիոն երևույթների, վալյուտաների արժեզրկմանը, նրանց կուրսի անկմանը:
Նույնիսկ ամերիկյան դոլլարը, որը հռչակվում է կապիտալիստական աշխար-
հի վալյուտաների վալյուտան, նրանց թագուհին, մեծ չափով զցել է իր գնո-
ղունակությունը: Ամերիկյան պրոգրեսիվ տնտեսագետ Վիկտոր Պերլոն վեր-
ջերս գրած իր հոդվածը ուղղակի անվանել է «Դոլլարի ճգնաժամը»: Այդ հոդ-
վածում Վ. Պերլոն նշում է, որ «դոլլարի ճգնաժամը հանդիսանում է իմպերիա-
լիզմի պատմության նոր էտապին անցնելու հետևանք»¹: Վ. Պերլոն ցույց է
տալիս, որ արտաքին առևտրի բալանսի խախտման հետևանքով ԱՄՆ-ը 1958—
1960 թթ. բնթացրում կորցրին իրենց ոսկու պաշարից 5 միլիարդ դոլլար ոսկի:
Դա առաջին հերթին հետևանք է այն բանի, որ նույն 1958—1960 թթ. ԱՄՆ-ի
վճարային բալանսի պակասորդը (մինուսը) կազմել է 11 միլիարդ դոլլար:
Նման բացասական երևույթները լուրջ կերպով են անդրադառնում ԱՄՆ-ի ոս-
կու պաշարի վրա: Եթե երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի
ոսկու պաշարը բարձրանալով հասավ մինչև մոտ 25 միլիարդ դոլլարի

¹ Տե՛ս ժուռնալ «Мировая экономика и международные отношения», № 1, 1961
стр. 47.

(1949 թ.), ապա հետագայում նա իջնելով, ներկայումս հասել է մինչև 17,7 միլիարդ դոլլարի: Թե ինչ չափով է ընկել կապիտալիստական երկրների վալյուտաների կուրսը, դա հայտնի է դառնում այն փաստից, որ 1946—1960 թթ. ընթացքում ԱՄՆ-ի դոլլարի կուրսը ընկել է 34 տոկոսով, Անգլիայի ֆունտ ստեռլինգինը 45, Ֆրանսիայի ֆրանկինը— 81, Իտալիայի լիրայինը 55 տոկոսով: Այսպիսով կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացումը, նրա նոր էտապը բնութագրվում է նաև կապիտալիստական աշխարհի ֆինանսա-վալյուտային հարաբերությունների մեծ չափի խախտմամբ, վալյուտային կուրսի զգալի անկմամբ:

Կապիտալիստական սիստեմի հակասությունների սրումը ժամանակակից էտապում իր արտահայտությունն է գտնում նաև նրա անհամաչափ զարգացման օրենքի գործողության ուժեղացման մեջ: Այդ օրենքի ուժեղացումը տեղի է ունենում ոչ միայն տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման անհամաչափության մեջ, այլև նրանում, որ այդ օրենքի գործողության հետևանքով փոփոխվում է առանձին կապիտալիստական երկրների տեսակարար կշիռը արտադրության, արտաքին առևտրի և կապիտալների արտահանման ասպարեզում: Այդ իր հերթին սրում է տնտեսական և քաղաքական հակասությունները տարբեր կապիտալիստական երկրների միջև: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի տեսակարար կշիռը կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրանքում հասավ անցյալում շտեմնված բարձրության և 1948 թ. կազմեց 53,4 տոկոս: Սակայն հետագայում դրությունը փոխվեց և ԱՄՆ-ի տեսակարար կշիռը աստիճանաբար նվազելով 1960 թ. կազմեց մոտ 44,8 տոկոս: Դրա փոխարեն ընդհակառակը, բարձրացավ այլ կապիտալիստական երկրների տեսակարար կշիռը, օրինակ, ԳՖՌ—1948 թ. 3,6 տոկոսի փոխարեն 1960 թ. կազմեց 8,8, Իտալիայինը համապատասխանորեն 2,56 և 3,9, Ֆրանսիայինը՝ 3,9 և 5,0, Ծապոնիայինը 1,0 և 3,9 տոկոս և այլն:

Կապիտալիստական էկոնոմիկայի վերը նշված հակասությունների սրումը, մոնոպոլիաների գերիշխանության ուժեղացումը անխուսափելիորեն տանում են բանվոր դատակարգի, գյուղացիության, կապիտալիստական երկրների ողջ աշխատավորության դրության վատթարամանը: Դրանով պետք է բացատրել դասակարգային մարտերի սրումը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում, մանավանդ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Բուրժուական, ռեֆորմիստական և ուղիղիստական տեսաբանները բարբաջում են դասակարգերի վերացման մասին՝ կապիտալիզմի զարգացման ներկա էտապում, այն մասին, որ ժամանակակից բուրժուական պետությունը իբր թե վեր է ածվել «ընդհանուր բարեկեցության» պետության, որ բանվորների և կապիտալիստների միջև ստեղծվում է համերաշխություն, մարդկային վերաբերմունք, որ կապիտալիզմը դարձել է «ժողովրդական», «դեմոկրատական» և այլն: Սակայն կապիտալիստական իրականությունը, բանվոր դասակարգի պայքարի ուժեղացումը ի շիք են դարձնում նման «տեսությունները» թավական է միայն ասել, որ ամբողջ կապիտալիստական աշխարհում, եթե 1958 թ. գործադուլ էին արել 22,4 միլիոն մարդ, իսկ 1959 թ. 40,7 միլիոն մարդ, ապա 1960 թ. գործադուլավորների ընդհանուր թիվը հասավ մինչև 53,2

միլիոն մարդու Ընդ որում բանվոր դասակարգի գործադուլների մեծ մասը ընթացել է քաղաքական լողունքների ազդեցություն տակ:

Այն փաստը, որ ներկա պայմաններում գործադուլների միջոցով բանվորներին մեծ մասով հաջողվում է լրիվ կամ մասնակի հաղթանակ տանել կապիտալիստների դեմ, ոչ միայն հետևանք է բանվոր դասակարգի կազմակերպվածության ու գիտակցականության բարձրացմանը, այլև մեծ շահով կապված է սոցիալիզմի համաշխարհային սիստեմի գոյության, որը ուժ ու կորով է ներշնչում բանվորներին և թուլացնում կապիտալիստների դիմադրությունը:

Մարքսիզմ-լենինիզմը դարձել է ամբողջ աշխարհում մի այնպիսի գաղափարական մեծ ուժ, որի դրոշի տակ են աշխատում և պայքարում ոչ միայն սոցիալիստական երկրների աշխատավորները, այլև կապիտալիստական, գաղութային և նոր ազատություն ստացած երկրների աշխատավորների ավելի և ավելի լայն զանգվածները: Այդ մասին են վկայում փաստերը, որոնք վերաբերվում են կոմունիստական պարտիանների զարգացմանը: Եթե 1928 թ. ամբողջ աշխարհում կային 46 կոմունիստական ու բանվորական պարտիաներ, ապա 1960 թ. նրանց թիվը կազմում էր 87: Միայն կապիտալիստական երկրների կոմունիստների թիվը եթե 1928 թ. կազմում էր 443 հազար մարդ, ապա 1960 թ. ավելի քան 5,2 միլիոն մարդ:

Հատկանշական են տվյալները, որոնք վերաբերում են կոմունիստների բաշխմանը ըստ մայրցամաքների¹:

	1939 թ.	1960 թ.
Եվրոպա	450 հազար	2,5 միլիոն
Ասիա	20 հազար	մոտ 2,5 միլիոն
Ամերիկա	180 հազար	ավելի քան 250 հազար
Աֆրիկա	5 հազար	50 հազար

Այս տվյալները ցույց են տալիս, որ կոմունիստների ազդեցությունը ավելի շատ տարածված է Եվրոպայի կապիտալիստական երկրներում, Ասիայում և համեմատաբար թույլ՝ Ամերիկայում և Աֆրիկայում: Բայց և այդ երկրամասերում մենք տեսնում ենք կոմունիստների թվի զգալի աճ: Պետք է նկատի ունենալ, որ կոմունիստների թիվը միակ ցուցանիշը չէ մասսանների վրա նրանց ունեցած ազդեցության մասին: Հիշենք, որ 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի նախօրյակին (1917 թ. հոկտիսին) Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի շարքերում կային միայն 240 հազար կոմունիստներ, բայց նրանց ազդեցությունը Ռուսաստանի բազմամիլիոն աշխատավորության վրա այնքան մեծ էր, որ նրանց ղեկավարությամբ, Մեծ Լենինի զլխավորությամբ իրագործվեց սոցիալիստական ռևոլյուցիան Ռուսաստանում: Կոմունիստները ամբողջ աշխարհում դարձել են մի այնպիսի մեծ ուժ, որից դողում են իմպերիալիստները, բոլոր կարգի ռեակցիոներները: Եթե 1928 թ. ամբողջ աշխարհում կոմունիստների թիվը կազմում էր 1680 հազար հոգի, ապա 1960 թ. 36 միլիոն հոգի, որից ավելի քան 5,2 միլիոնը կապիտալիստական աշխարհում: Սա քաղաքական գործիչների մի հսկայական բանակ է, որը իր հերթին արտահայտում է կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի խորացումը և նոր, սոցիալիստական կարգերի անխուսափելի հաղթանակը ամբողջ աշխարհում:

¹ ժողովայն «КОММУНИСТ», № 6, 1961, стр. 110.

* *

Այսպիսով կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության 1960 թ. նոյեմբերին ընդունած «Հայտարարության» տեսանկյունից քննելով ժամանակակից համաշխարհային իրադրությունը կապիտալիստական սիստեմի հակասությունների խորացման սրումը, մենք տեսնում ենք, որ կապիտալիզմի համաշխարհային սիստեմը թևակոխել է իր ընդհանուր ճգնաժամի նոր, երրորդ էտապը:

Սակայն վերը ասածներից շստք է անել սխալ եզրակացություններ և թերահնահատել բուրժուական պետությունների ուժն ու հնարավորությունները: Կապիտալիզմը դեռ տիրապետում է աշխարհի մեծ մասում, համաշխարհային կապիտալիստական սիստեմը իր արտադրանքով դեռ գերակշռում է համաշխարհային սոցիալիստական սիստեմին, նա դեռ ունի իր զարգացման, թեպետև սահմանափակ, հնարավորությունները: Ներկա պայմաններում ևս, քանի որ գոյություն ունի իմպերիալիզմը, գոյություն ունի նաև պատերազմի վրտանգր: Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների «Հայտարարության» մեջ ասված է. «Բոլոր երկրների ժողովուրդներին հայտնի է, որ նոր համաշխարհային պատերազմի վտանգը դեռ չի անցել: Ազրեսիայի և պատերազմի գլխավոր ուժը ամերիկյան իմպերիալիզմն է» (էջ 28):

Սակայն ուժերի փոխհարաբերություններն այժմ այլ է, քան նախկինում և դա հիմք է տալիս ասելու, որ ներկայումս խաղաղության ուժերը ավելի զորեղ են քան պատերազմի ուժերը: «Պարզ է,—ասում է Ն. Ս. Խրուշչովը,—որ ժողովուրդները շեն կարող համաձայնել այն բանին, թե համաշխարհային նոր պատերազմը անխուսափելի է:

Ժողովուրդները պետք է միջոցներ ձեռք առնեն, որ իմպերիալիստական ատոմային մոլագարներին թույլ չտան մոխրակույտեր դառննել քաղաքները արգավանդ հողերն ու այգիները վերածել անբնակ անապատների»¹:

Վերլուծելով ժամանակակից համաշխարհային իրադրությունը, սոցիալիզմի և կապիտալիզմի զարգացման տենդենցներն ու հեռանկարները, պետք է հանգել այն եզրակացության, որ կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի խորացումը, նրա նոր էտապի առաջացումը ավելի ցայտուն կերպով է ցույց տալիս կապիտալիզմի պատմականորեն դատապարտվածությունը. իսկ մյուս կողմից ավելի որոշակի է դառնում սոցիալիզմի և կոմունիզմի գալիք հաղթանակը ամբողջ աշխարհում: Ինչպես ասված է ՍՄԿՊ նոր ծրագրի նախագծում, «...համաշխարհային իմպերիալիստական սիստեմը բզկտվում է խոր և սուր հակասություններից: Աշխատանքի և կապիտալի հակամարտությունը, ժողովրդի և մոնոպոլիաների հակասությունները, աճող միլիտարիզմը. գաղութային սիստեմի տրոհվելը, իմպերիալիստական երկրների միջև եղած հակասությունները, երիտասարդ ազգային պետությունների և հին դադութարար տերությունների միջև եղած կոնֆլիկտներն ու հակասությունները և ամենազլխավորը՝ համաշխարհային սոցիալիզմի շեշտակի աճը, քայքայում ու խարխում են իմպերիալիզմը, տանում են դեպի նրա թուլացումն ու կործանումը»²:

¹ Ն. Ս. Խրուշչով, Ժողովուրդների քաղաքում տեղի ունեցած հանդիսավոր նիստում, Հայպետհրատ, 1961 թ., էջ 31:

² «Սովետական Հայաստան», 30 օգոստոսի, 1961 թ.: